В. Р. НАЗАРЯН, Теория и практика конституции союзной республики, Ереван, изд-во «Айастан», 1987, 242 с.

Վ. Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ, Միութենական հանրապետության սահմանադրության տեսությունը և պրակտիկան, *Երևան, «Հայաստան» հրատ., 1987, 242 էջ։*

ՍՄԿԿ XXVII համագումարի կողմից հաստատված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգում, սովետական դեմոկրատիայի հետագա ծավալման և ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման խորացման ստրատեգիական կուրսը պետք է իրականացվի սոցիալիստական օրինականության և իրավակարգի ամրապնդման պայմաններում։ Եվ դա բնական է, քանի որ, ինչպես նշվեց ՍՄԿԿ Կենտկոմի 1987 թ. հունվարյան պլենումում, «Իսկական դեմոկրատիան օրենքից դուրս և օրենքից վեր գոյություն չունի», «Սոցիալիստական դեմոկրատիան ոչ մի ընդհանուր բան չունի անարգելության, անպատասխանատվության, անարխիայի հետ», «Դեմոկրատացումը հարկավոր է նրա համար, որ շարժվենք առաջ, որ հասարակության մեջ ամրապնդվի օրինականությունը և հաղթանակի արդարությունը, որ հաստատվի այնպիսի բարոյական մթնոլորտ, որի պայմաններում մարդն ապրում է ազատ և աշխատում արգասավոր»[1]։ Պլենումում նշվեց, որ «Ընթացիկ հնգամյակում պետք է մեծ աշխատանք կատարվի էկոնոմիկական, սոցիալական ոլորտն ու մշակույթը, ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարումը զարգացնելու, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների երաշխիքներն ընդլայնելու հետ կապված նոր օրենքների նախապատրաստման և ընդունման ուղղությամբ»[2]։

Այս բոլորը լուրջ խնդիրներ են դնում սովետական իրավագիտության առջև և բացառիկ հրատապ են դարձնում այնպիսի հետազոտությունների իրականացումը, որոնք ուղղված են կուսակցության կողմից առաջ քաշված պետական և հասարակական կյանքի հեղափոխական վերակառուցման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակմանը, սովետական օրենսդրության հետագա զարգացման և կատարելագործման տեսական ու պրակտիկ խնդիրների լուծմանը։

Մանրամասն ծանոթանալով Վ. Ռ. Նազարյանի՝ «Միութենական հանրապետության սահմանադրության տեսությունը և պրակտիկան» մենագրությանը, գալիս ես այն համոզման, որ հեղինակի համար ելակետային է ՍՄԿԿ Կենտկոմի հունվարյան պլենումի առաջ քաշած դրույթը այն մասին, որ «Վերակառուցումը նշանակում է վճռական շրջադարձ կատարել դեպի գիտություն, նրա հետ պրակտիկայի գործարար պարտնյորություն՝ վերջնական բարձր արդյունքների հասնելու նպատակով, ամեն մի նախաձեռնություն գիտական պատկառելի հիմքի վրա դնելու ունակություն, հասարակության նորացման կուրսը ակտիվորեն պաշտպանելու գիտնականների պատրաստակամություն և չերմ ցանկություն»[3]։

Հեղինակը իր առջև նպատակ է դրել միութենական հանրապետությունների գործող օրենսդրությունների և հատկապես դրանց սահմանադրական հիմունքների խորը և լայնածավալ հետազոտությունների հիման վրա ամբողջական ուսումնք շարադրել հանրապետություններ սահմանադրությունների էության, բովանդակության, կառուցվածքի, գործադրման պրակտիկայի մասին և գործնական առաջարկներ ու հանձնարարականներ մշակել սահմանադրության հիման վրա հանրապետական օրենսդրության զարգացման և կատարելագործման ուղղությամբ, այն հաշվով, որպեսզի այդ օրենսդրությունը առավելագույն չափով նպաստի կուսակցության XXVII համագումարի կողմից հաստատված ստրատեգիական կուրսի իրականացմանը։

Մենագրությունը այլի է ընկնում հետազոտության առարկայի խորը և բազմակողմանի

---

[1] «ՍՄԿԿ Կենտկոմի պլենումի նյութերը, 1987 թվականի հունվարի 27—28-ին», Երևան, 1987, էջ 50, 52։

[2] Նույն տեղում, էջ 50—51։

[3] Նույն տեղում, էջ 22։

ընդգրկումով, նրա բացահայտման նկատմամբ հեղինակի հանդես բերած նոր մոտեցմամբ, սովետական սահմանադրության տեսության և պրակտիկայի պրոբլեմների իմացությամբ, դրանց համակողմանի մեկնաբանություններով, ինչպես նաև տեսական ու գործնական նշանակություն ունեցող հիմնավորված ընդհանրացումներով ու հետևություններով։

Աշխատության առաջին գլխում հեղինակը միութենական հանրապետության սահմանադրությունը դիտարկում է որպես սովետական սահմանադրական համակարգի օղակներից մեկը և այդ դիրքերից լուսաբանում է դրա բովանդակությունն ու կառուցվածքը։ Վ. Նազարյանին հաջողվել է հիմնավոր խոսք ասել սովետական սահմանադրական համակարգի էության, կառուցվածքի, այդ համակարգում ՍՍՀՄ սահմանադրության գրաված առաջատար տեղի և վերջինիս՝ միութենական հանրապետությունների սահմանադրությունների վրա թողած ազդեցության ձևերի ու եղանակների մասին։ Հատուկ պարագրաֆ է հատկացված միութենական հանրապետությունների հիմնական օրենքների քաղաքական-իրավաբանական վերլուծությանը։ Իր հետազոտությունների հիման վրա հեղինակը բնույթով նոր տեսակետ է հիմնավորում սովետական սահմանադրությունների գործողության սոցիալական-օգտակար արդյունքի՝ որպես այն համակարգաստեղծ գործոնի մասին, որն ապահովում է այդ սահմանադրությունների ամրողջականությունը, կայունությունը, հավասարակշռությունը և գործողության արդյունավետությունը։ Հեղինակը նման գործոն է համարում այն ցանկալի սահմանադրական իրավակարգը, որի ստեղծմանը, ամրապնդմանը և զարգացմանը ուղղված է սովետական բոլոր սահմանադրությունների գործողությունը։ Նման մոտեցումը հեղինակին հնարավորություն է ընձեռել օբյեկտիվ չափանիշներ գտնելու միութենական հանրապետությունների սահմանադրությունների գործողության արդյունավետության գնահատման համար։

Մենագրության երկրորդ գլխում հեղինակի հետազոտության առարկան են դարձել միութենական հանրապետությունների սահմանադրությունների ծագման և զարգացման օրինաչափությունները։ Վ. Նազարյանը այստեղ տվել է այդ սահմանադրությունների զարգացման հիմնական պատմական փուլերի որոշիչ բնութագրերը, միութենական հանրապետությունների գործող սահմանադրություններում մատնանշել սովետական սահմանադրությանը բնորոշ հիմնադիր գաղափարների և սկզբունքների հաջորդայնության անհրաժեշտությունը։

Մենագրության երրորդ ամենից ստվարածավալ գլուխը, նվիրված է միութենական հանրապետությունների հասարակական հարաբերությունների սահմանադրական-իրավական կարգավորման մեխանիզմի հետ կապված տեսական և գործնական խնդիրների վերլուծությանը։ Այստեղ գիտական լուրջ հետաքրքրություն է ներկայացնում հեղինակի մշակած տեսակետը՝ գլխավոր սահմանադրական ինստիտուտի մասին, որը հնարավորություն է ընձեռել օրգանական կապ հաստատելու մի կողմից հասարակական հարաբերությունների սահմանադրական-իրավական կարգավորման և, մյուս կողմից, սովետական դեմոկրատիայի հետագա զարգացման ու ժողովրդի սոցիալիստական ինքնակառավարման խորացման միջև։ Հեղինակը հիմնավորում է այն գաղափարը, որ ժողովրդի լիիշխանությունը և նրա սոցիալիստական ինքնակառավարման համակարգի հիմքերը ամրապնդող, ինչպես նաև ժողովրդին պատկանող պետական իշխանության իրականացման ու նրա սոցիալիստական ինքնակառավարման խորացման պրոցեսում ծավալվող հասարակական հարաբերությունները կարգավորող սահմանադրական նորմերը կազմում են այն գլխավոր ինստիտուտը, որի հիման վրա պետք է զարգանա ու կատարելագործվի պետական և հասարակական կարգի հեղափոխական վերակառուցմանն ուղղված ողջ օրենսդրությունը։ Իր բնույթով նոր այս տեսակետը հեղինակի համար հիմք է ծառայել հանրապետական օրենսդրության կատարելագործմանն ուղղված մի շարք արժեքավոր գործնական առաջարկներ մշակելու համար։

Գիտական է գործնական տեսակետից արդյունավետ է նաև միութենական հանրապետությունների սահմանադրությունների բարձրագույն իրավաբանական ուժի օբյեկտիվ նախադրյալների մասին հեղինակի մշակած տեսակետը, որը Վ. Նազարյանին հնարավորություն է տվել նոր դիրքերից լուսաբանելու հանրապետությունների պետական և հասարակական կյանքում ծավալվող հարաբերություններում այդ սահմանադրությունների օրգանական կապերը, ինչպես նաև նոր խոսք ասելու միութենական հանրապետությունների սահմանադրությունների ներքին կառուցվածքի և բովանդակության մասին։ Հեղինակը իրավացիորեն գտնում է, որ միութենական հանրապետությունների սահմանադրությունների էությունը, բովանդակությունը, կառուցվածքը և զարգացման օրինաչափությունները պայմանավորված են սահմանադրությունների միջոցով կարգավորվող հասարակական հարաբերությունների արմատական և հիմնավոր բնույթով, վերջիններիս առանձնահատկություններով։

Գիտականորեն հիմնավորված է մենագրության հեղինակի ձգտումը՝ հասարակական հարաբերությունների սահմանադրական իրավական կարգավորման մեխանիզմը դիտարկելու պետական և հասարակական կյանքի վրա սահմանադրությունների թողած ընդհանուր կոմպլեքսային ազդեցության ոլորտներում։ Դա հնարավորություն է տվել մեկնաբանելու սահմանադրության թողած իրավաբանական ազդեցության բնորոշ գծերն ու առանձնահատկությունները։

Քննարկվող կարևոր խնդիրներից մեկը միութենական հանրապետությունների սահմանադրությունների անմիջական գործողության հարցն է։ Հեղինակը, համամիտ լինելով սովետական իրավաբանական գրականության մեջ լայն ճանաչում ստացած այն տեսակետի հետ, համաձայն որի սահմանադրությունը անմիջական գործող իրավական ակտ է, միաժամանակ գտնում է, որ միութենական հանրապետությունների սահմանադրություններում նորմերի զգալի մասի իրական ներգործությունը հասարակական կյանքի վրա կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, եթե ժամանակին ընդունվեն դրանց պահանջները կոնկրետացնող և դրանց կատարման համար իրական երաշխիքներ սահմանող օրենսդրական ակտերը։ Այս դիրքերից Վ. Նազարյանը հանգամանորեն վերլուծում է միութենական հանրապետությունների սահմանադրությունների իրավաստեղծ պոտենցիալների իրացման հետ կապված հրատապ խնդիրները, ցույց է տալիս սահմանադրությունների տեղը և դերը հանրապետական օրենսդրության համակարգում։

Ուշագրավ է նաև հեղինակի հիմնավորած առաջարկը՝ միութենական հանրապետությունների սահմանադրությունների պահպանման նկատմամբ վերահսկողության արդյունավետ համակարգ ստեղծելու ուղղությամբ։ Այդ կապակցությամբ Վ. Նազարյանը առաջարկում է միութենական հանրապետությունների դերագույն սովետներում ստեղծել մշտական հանձնաժողովներ, սահմանել, որ միութենական հանրապետությունների մինիստրությունների և մյուս գերատեսչությունների կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերը կարող են գործողության մեջ մտնել միայն դրանց պետական գրանցումից հետո, որի ընթացքում պետք է մանրակրկիտ ստուգվի դրանց համապատասխանությունը սահմանադրության պահանջներին։ Հեղինակը առաջարկում է նաև միութենական հանրապետությունների գերագույն սովետներին և դատախազություններին մասնակից դարձնել սահմանադրության պահպանման նկատմամբ վերահսկողության գործին։

Այս ամենով հանդերձ, աշխատանքը առավել կշահեր, եթե հեղինակը հատուկ քննարկման առարկա դարձներ միութենական հանրապետության սահմանադրության կիրառումը մի կողմից պետական մարմինների, մյուս կողմից՝ հասարակական կազմակերպությունների, աշխատավորական կոլեկտիվների և քաղաքացիների կողմից։ Ելնելով այն գաղափարից, որ սահմանադրության վերջնական իրացումը նրա պահանջների մարմնավորումն է պետական և հասարակական կազմակերպությունների գործողություններում և քաղաքացիների վարքագծի մեջ, ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը առավել հանգամանորեն անդրադառնար այս կարևոր խնդիրներին։ Սակայն արված դիտողությունները չեն կարող կասկածի տակ դնել գրախոսվող մենագրության արժանիքները, որը, անշուշտ, նշանակալից ներդրում է սովետական սահմանադրության հրատապ պրոբլեմների հետազոտման բնագավառում։

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու